



ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПЕТ АРАРАТА

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N 54

< 01 > 03 2017թ.

ք. Արտաշատ

Ն Ե Ր Ք Ի Ն Ա ՈՒ Դ Ի Տ Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Ն Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2017 թվականի տարեկան ծրագրով.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Արտաշատի N4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2017 թվականի մարտի 1-ից մինչև մարտի 6-ը ներառյալ՝ 4 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Արտաշատի N4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2014, 2015 և 2016 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ